

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 4-ին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը
մարզպետարանում քաղաքացիների ընդունելություն է կատարել:
Ընդունելությանը ներկայացել է 29 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել է 16, աշխատանքի
տեղավորման՝ 9, դպրոցի խորհրդի կազմից բողոքի, հարևանից բողոքի,
շենքի խաղահրապարակի վերանորոգման, դպրոցի անվանակոչման
հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության համար դիմած քաղաքացիների դիմումներին
տրվել է դրական լուծում:

Աշխատանքի տեղավորման վերաբերյալ դիմումները վերցվել են
հաշվառման, և ուսումնասիրվում են դրանց լուծման
հնարավորությունները:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում
մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են մյուս հարցերին
առնչվող դիմումները: